Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԼՃ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 13.Լոռու մարզ - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 19.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 2 դեպքի վարում (վերափաստագրման կազմակերպում, տրամադրվող նպաստի հետ չգանձման կազմակերպում), 20 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Բարեգործական ճաշարանի 2 շահառուներ մասնակցել են Ծաղկաձորում իրականացվող «Ոսկե սերունդ» սոցիալ-կրթական ամառային ճամբարին:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 40 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող խմբակներին՝ գրական, երգ, նկարչական, առողջապահական, հմուտ ձեռքեր:
  - Ճաշարանի 70 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝ քահանայի հետ հանդիպում, «Տարեցների միջազգային օր», «Ոսկե աշուն», Ամանորին նվիրված միջոցառում, այցելություն Վանաձորի Երկրաբանական թանգարան, այց Գեղագիտական ազգային կենտրոն, այցելություն Վանաձորի կերպարվեստի թանգարան և Վանաձորի Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն: Յուրաքանչյուր ամիս նշվել է այդ ամսում ծնված շահառուների ծննդյան տարեդարձերը:
  - Բուժքրոջ կողմից իրականացվել են հետևյալ թեմաներով դասընթացներ՝ «Սրտի սնուցման խանգարում», «Անմիզապահություն», «Շաքարային դիաբետ»:
  - Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են հետևյալ թեմաներով դասընթացներ՝ «Սոցիալական պաշտպանվածություն», «Տարիքին բնորոշ առանձնահատկություններ», «Հրատապ օգնություն», «Տարեցությունը մեկնաբանող սոցիալական տեսություններ, Տարեցների եվ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպեր», «Շահերի պաշտպանություն», «Ընտանիքին ուղղված սոցիալական բարեկեցության համակարգը ՀՀ-ում», «Ընտանեկան նպաստի համակարգը ՀՀ-ում, «Հասցեականություն. հասցեականության արդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականությունը ՀՀ-ում»:

- Հոգեբանի կողմից իրականացվել են խմբային հանդիպումներ ուղղված՝ ցավի նվազեցմանը, մեղմացմանը, տարիքային առանձնահատկությունների զարգացմանը, խմբում կոնֆլիկտների հաղթահարման ուղիներին, ուղեղի վարժանքին, կոմունիկատիվ տոլերանտության զարգացմանը, միայնակության հիմնախնդրին՝ որպես հոգեբանական ռեսուրս քննարկելուն/դիտարկելուն, հուզականմային վիճակի հետ կապված մետաֆորիկ քարտերով աշխատանքին, միջանձնային հարաբերություններում կոնֆլիկտի հաղթահարման ուղիներին, կոգնիտիվ ոլորտի գնահատմանը՝ զարգացմանը, արտաքին անբարենպաստ պայմաններում անհատի կոպինգին՝ մեխանիզմների օգտագործման գնահատմանը:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Տարեցների միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/jjdpdm, http://surl.li/xfhtye,
- http://surl.li/yerecf, http://surl.li/kkuwco, http://surl.li/tqsxjx, http://surl.li/vcfrxt**),**
- Վանաձորի կենտրոնի շահառուները Գեղագիտական ազգային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/onxjvm**),**
- Հանդիպում դերասան, ԵԹԿՊ-ի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Էլֆիք Զոհրաբյանի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/tdofoy**),**
- Վանաձորի, Սպիտակի կենտրոնի շահառուները Վանաձորի կերպարվեստի թանգարանում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/citotl, http://surl.li/pxpkxz**),**
- Ալավերդու ցերեկային կենտրոնում շահառուի ծննդյան տարեդարձի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/vhhjhm),
- «Ոսկե աշուն»-ը Ալավերդու ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/pwjree),
- Վանաձորի ցերեկային կենտրոնի շահառուները Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/kfjqui):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Մարզում գործող բոլոր ճաշարանների խոհարարները մասնակցել են «Առողջ սնուցման հիմունքները» մասնագիտական ինտերակտիվ եռօրյա դասընթացին, որը կազմակերպվել էր The holy digital-ի հետ համատեղ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 65 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 38 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 22 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 3 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 35 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 62 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 0 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 100 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում | 70 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «19» 12. 2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)